ՔԱՂՎԱԾՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

ք. Բյուրեղավան 09 մարտի 2022թ.

2022 թվականի մարտի 09-ին, ժամը 15:00-ին, Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրում՝ Բյուրեղավանի համայնքապետարանի թիվ 1 վարչական շենքում, տեղի ունեցավ համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման նպատակով ստեղծված ֆինանսական, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական գործող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստ՝ «Բյուրեղավան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները սահմանելու և Բյուրեղավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 14-ի N 16-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշման նախագծի թեմայով:

Որոշվեց՝

հավանություն տալ «Բյուրեղավան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները սահմանելու և Բյուրեղավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 14-ի N 16-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Արման Օհանյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Արման Խանզադյան

_____ Արտյոմ Ավագյան

Իսկականի հետ ճիշտ է՝

Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Լ. Ավուշյան

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 16-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

h/h	Առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություն
	Ֆինանսական, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական գործող հանձնաժողով 09.03.2022թ.	Դիտողություններ և առաջարկություններ չկան	ընդունվել է	----------